2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆԴՎԱ-05/24

ք. Երևան «24» «հունվարի» 2024թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի (այսուհետ՝ դրամաշնորհի տրամադրող), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ջոնիկ Մարգարյանի (այսուհետ՝ դրամաշնորհի ստացող կամ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եւ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի 7-աղյուսակը և N 9.1 հավելվածը (այսուհետ՝ որոշում), ինչպես նաև Արդարադատության նախարարի հրամանով հաստատված (հաստատվող)՝ 2024 թվականի քրեակատարողական ծառայողների վերապատրաստման և քրակատարողական ու հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների հանրային ծառայողների հատուկ ուսուցման ծրագրերը (դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերն ու ժամանակացույցերը) (այսուհետ՝ հրաման)՝ «Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի մաս հանդիսացող «Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով դրամաշնորհի տրամադրողը պարտավորվում է ծրագրի մաս հանդիսացող Արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման միջոցառման իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28–ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի 7-աղյուսակով նախատեսված՝ 197652,0 հազ. (մեկ հարյուր իննսունյոթ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Արդարադատության նախարարի հրամանով հաստատված (հաստատվող)՝ 2024 թվականի քրեակատարողական ծառայողների

քրակատարողկան ու հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների հանրային ծառայողների հատուկ ուսուցման ծրագրերին (դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերին և ժամանակացույցերին) համապատասխան, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված N 1-ում :

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ:

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում սահմանել բացահայտված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.3 Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Դրամաշնորհ ստացողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացնելու.

բ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

2.1.4 Դրամաշնորհ ստոցողից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդրող տարվա փետրվարի 7-ը:

2.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի.

2.2.1.Պահանջել Դրամաշնորհ տրամադրողից սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված գումարը:

2.2.2 Դրամաշնորհ տրամադրողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. Տեղեկացնել Դրամաշնորհ տրամադրողին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում առաջացած խնդիրների մասին:

2.3. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել դրամաշնորհ ստացողին:

2.3.2 Իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է.

2.4.1.Կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով

2.4.3 Կատարել Դրամաշնորհի տրամադրողի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4 Դրամաշնորհի տրամադրողին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ:

2.4.5 Պայմանագրի գործողության ընթացում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.6 Դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության և պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքների ընդունման վերաբերյալ եզրակացության ստորագրմամբ:

3.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Դրամաշնորհի տրամադրողը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Դրամաշնորհի ստացողին է տրամադրում իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Դրամաշնորհի տրամադրողը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Դրամաշնորհի ստացողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Իրականացվող միջոցառումների դիմաց Դրամաշնորհի ստացողին վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, ամսական կտրվածքով, ոչ ուշ, քան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ համաձայն ֆինանսական պարտավորությունների հատկացման ժամանակացույցի (հավելված N 2):

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կենտրոնը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, ընդ որում, տուգանքի վճարումը Կենտրոնին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համաճարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները ունեն իրավաբանական ուժ, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Սույն պայմանագրով կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Դրամաշնորհի տրամադրող՝	**Կազմակերպություն՝**
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,	ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272	Հ/Հ 900018004821
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ս. Գևորգյան	Զ. Մարգարյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2024 թվականի _____ -ին
կնքված N_____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման

Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների (այսուհետ՝ դասընթաց) իրականացում	1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խնբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների վերապատրաստում և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների հանրային ծառայողների հատուկ ուսուցում: 2. Դասընթացներն իրականացվում են՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի N 476-Լ և N 477-Լ որոշումներով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ 2021 թվականի հունվարի 19-ի N 8-Լ ու 9-Լ և 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 667-Լ հրամաններով հաստատած կարգերով (ներառյալ՝ ծրագրերով, ժամանակացույցերով և այլ պայմաններով), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած ժամկետներում և ծրագրերով: Ծրագրի տևողությունը մեկ ունկնդրի հաշվարկով՝ 39 ակադեմիական ժամ է (մեկ ակադեմիական ժամի տևողությունը 40 րոպե է): 3. Կրակային դասընթացը ներառում է 9x18 մմ տրամաչափի «Բայկալ 442» կարճ ակոսափող հրազենով 12 և «Նշանակետ» էլեկտրոնային հրաձգային վարժասարքի «AK 47» ինքնաձիգով 36 կրակ արձակելու գործնական (ներառյալ ստուգարքայինը) դասընթաց, իսկ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պահպանության ստորաբաժնման հանրային ծառայողներն ինքնաձիգով 12 կրակ արձակելու գործնական դասընթաց (ներառյալ ստուգարքայինը՝ յուրաքանչյուր ծառայողի համար): 4. Դասընթացներն իրականացվում են Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենք և ք. Երևան, Մ. Խորենացու 162ա հասցեներում, կամ դրամաշնորհ տրամադրողի համաձայնությամբ այլ վայրում: 5. «Գորիս», «Արթիկ», «Սևան» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկների ծառայողները, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզային բաժինների հարկադիր կատարման հանրային ծառայողները՝ դասընթացների իրականացման ժամանակահատվածում՝ ցանկության դեպքում, հնարավորություն ունեն անվճար գիշերելու՝ ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացում	Արդյունք՝ Մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացում Գնահատման չափանիշներ՝ 1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցած ունկնդիրների թիվը՝ հավաստագիր (վկայական) ստացած՝ առնվազն դասընթացներին մասնակցած ծառայողների 90 տոկոսը, 2. Վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների համապատասխանությունը ծրագրով նախատեսված թեմաներին	2024 թվականի դեկտեմբերի 30-ը	197652,0

	րդ նրբանցք, N 56 շենքի կացարաններում: Կազմակերպությունը յուրաքանչյուր վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնող գիշերակացով մնացող քրեակատարողական ծառայողի (հանրային ծառայողի) և հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողին (հանրային ծառայողին) տրամադրում է մեկ հատ չոր օճառ (առնվազն՝ 100 գրամ) և մեկ հատ զուգարանի թուղթ /գլանափաթեթ/ (առնվազն՝ 20 մետր երկարության): 6. Դասընթացների իրականացման ժամանակահատվածում Կազմակերպությունը ապահովում է Երևան քաղաքից դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 հասցե (և հակառակը՝ դեպի Երևան) ուղևորափոխադրումը՝ ունկնդիրների (հանրային ծառայողների) ցանկության դեպքում: 7. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողներին (հանրային ծառայողներին)՝ միայն վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացման օրերին (ըստ դասացուցակի և Կազմակերպության Կարբիի ուսումնական կենտրոնում դասընթացներն իրականացնելու դեպքում), Կազմակերպությունն ապահովում է սնունդով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ 2021 թվականի հունվարի 19-ի N 9-Լ հրամանով սահմանված մենյուին (ճաշացանկին) համապատասխան: 8. Կազմակերպությունը յուրաքանչյուր վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնող քրեակատարողական ծառայողի (հանրային ծառայողի) և հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի (հանրային ծառայողի) տրամադրում է մեկ հատ սովորական կապույտ գնդիկավոր գրիչ, և մեկ հատ նոթատետր (առնվազն՝ 72 թերթանի):				

Դրամաշնորհ տրամադրող՝
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Գլխավոր քարտուղար՝

Ս. Գևորգյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրեն՝

Ձ. Մարգարյան

Կ.Տ.

Հավելված N 2

2024 թվականի ________________ -ին

կնքված N________________ պայմանագրի

«2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների մատուցման» ծրագրի գծով 2024 թվականի բյուջետային հատկացումների սահմանաքանակների վերաբերյալ ժամանակացույց*

Հազար դրամ

...րի միջոցառման անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2024թ. պետական բյուջեից, ընդ որում (*թվերը ներկայացված են աճողական կարգով)											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմ.	դեկտեմ.
...Հ ԱՆ հատուկ ...ռայողների ...պատրաստման ...տուկ ուսուցման ...այությունների մատուցում	**197652,0**	**16471,0**	**32942,0**	**49413,0**	**65884,0**	**82355,0**	**98826,0**	**115297,0**	**131768,0**	**148239,0**	**164710,0**	**181181,0**	**197652,0**

Դրամաշնորհ տրամադրող՝
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ 900011194272

Գլխավոր քարտուղար

Ս. Գևորգյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ 900018004821

Տնօրեն՝

Ձ. Մարգարյան

Կ.Տ.